# ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆԾԱ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

*Կենսագրական համառոտ տեղեկություններ*

## *Տ. ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ*

Առաջնորդ Հարավային Ռուսաստանի հայոց թեմի



*Ծնվել է 1955 թ. հունվարի 19-ին, Թբիլիսիում: Նախնական կրթությունը ստացել է Երևանի թիվ 82 դպրոցում:*

*1967 թ. ընդունվել է Հոգևոր ճեմարան:*

*1973 թ. ավարտել է ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ Մովսես Երզնկացու «Պատարագի մեկնությունը» թեմայով:*

*1972 թ. դեկտեմբերին ձեռնադրվել է սարկավագ:*

*1973 թ., ձեռամբ Սիոն արքեպս. Մանուկյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:*

*1976 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Մովսես Երզնկացու դավանաբանական թղթերը» թեմայով:*

*1976 թ., ձեռամբ Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները:*

*1984-90 թթ. եղել է ԵՀԽ Աստվածաբանական կրթության հանձնաժողովի անդամ:*

*1985-90 թթ. ղեկավարել է Աստվածաշնչի արևելահայերեն թարգմանության աշխատանքները:*

*1990-91 թթ. եղել է Հաղբատի վանահայր:*

*1991 թ. հուլիսի 25-ից՝ Հյուսիսային Կովկասի առաջնորդական փոխանորդ:*

*1993 թ. մարտի 25-ին պաշտպանել է ծայրագույն վարդապետական թեզ՝ «Հայոց Եկեղեցու Քրիստոսաբանությունը»՝ թեմայով, և ստացել ծայրագույն վարդապետության աստիճան:*

*1997 թ. հուլիսի 13-ից Գարեգին Ա Կաթողիկոսի տնօրինությամբ՝ Հարավային Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդն է:*



ՕԾՈՒՄ ՆՈՐԱՊՍԱԿ Տ. ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ